Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի արտաքին քաղաքականության կարեւոր ուղղություններից է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ: Համագործակցությունը մեծապես նպաստել է մարզի տնտեսության, արդարադատության, պետական կառավարման ոլորտներում բարեփոխումների իրականացմանը, ժողովրդավարական հասարակության կայացմանը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությամբ զբաղվող ինստիտուտների ամրապնդմանը:

Անցյալ տարվա ընթացքում ԵՄ կողմից իրականացվել են համայնքների գյուղատնտեսական ենթակառուցվածքները բարելավող ծրագրեր.

1.<Գումարված ջանքեր, բազմապատկված արդյունքներ> ծրագրի արդյունքում ձեեռք է բերվել գյուղատնտեսական տեխնիկայի 2-ական հավաքածու, 1 բեռնատար, 2 միկրոավտոբուս, կազմակերպվել են 8 համայնքների բնակչության կարողությունների զարգացման ծրագրեր տարբեր ոլորտներում:

2.1 Մարզի 6 համայնքներում կազմակերպվել է էկոլոգիապես մաքուր մեղրի արտադրություն

3. Արենի համայնքում կառուցվել է չոր մրգերի արտադրության արտադրամաս

4. Զառիթափ համայնքում կառուցվում է կաթի մթերման կետ

2015 թ Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը (ՀաՄաՏեղ) ծրագրի շրջանակներում հիմնադրվել է Վայքի Ինֆոտունը, որի նպատակն է նպաստել քաղաքացիների տեղական ինքնակառավարման մասին իրազեկմանը և մասնակցությանը, աջակցել քաղաքացիների նախաձեռնություններին և հանդիսանալ այլընտրանքային տեղեկատվության հավաքագրման և տարածման կենտրոն:

Եղեգնաձոր համայնքում ՎԻՆՆԵՏ Հայաստանը հիմնադրել է Եղեգնաձորի կանանց ռեսուրս կենտրոնը, որը նույնպես կարևոր է համայնքային խնդիրների լուծման գործընթացում որպես առանցքային դիկտատոր :

Շվեցարական գրասենյակի կողմից հիմնվել է 14 անասնաբուժական կետեր և համալրվել սարքավորումներով ու դեղորայքով: Մարզի 18 համայնքներում կազմակերպվել է համայնքապետարանների աշխատակիցների համար համակարգչային ուսուցման ծրագրեր և տրամադրվել համակարգիչներ:

Շվեցարական ՀԵԿ կազմակերպության օժանդակությամբ հիմնվել է նորագույն տեխնոլոգիաներով աճեցվող նոր սորտի պտղի 2 հա այգի: Նույն ծրագրով Եղեգնաձոր քաղաքում ստեղծվել է երիտասարդական ճամբար:

Գերմանական դեսպանատան միջոցներով մարզում հիմնվել է 5 համայնքային կենտրոններ: Եղեգնաձոր քաղաքում հիմնվել է մանկապարտեզ, որը կֆինանսավորվի 3 տարի:

Խաղաղության կորպուսի օժանդակությամբ Եղեգնաձոր քաղաքում ստեղծվել է համայնքային կենտրոն և վերանորոգվել մեկ խաղահրապարակ:

Ամերիկյան դեսպանատան միջոցներով մարզի 3 քաղաքներում կազմակերպվել է 5 խորհրդատվական և 2 կարողություններ զարգացման ծրագրեր:

Այս ամսին ԵՄ միջոցներով մարզի Զառիթափ համայնքում բացվել է Զառիթափի Քաղաքացիների սպասարկման գրասենյակը:

Վայրի բնության պահպանության Հայաստանյան գրասենյակի միջոցներով մարզի 14 համայնքներում իրականցվել է բնապահպանական 18 փոքր ծրագրեր, մինչև տարվա վերջ կիրականացվի ևս 36 նմանատիպ ծրագրեր:

Նշված ծրագրերը հիմնականում շարունակական են: Մշտական ուշադրության կենտրոնում է նոր միջազգային դոնոր գործընկերների ձեքբերման աշխատանքները:

Առաջիկայում կմեկնարկի Սևծովյան ավազանի երկրների համագործակցության 2014-2020 թթ ծրագիրը, ԵՄ-ի կողմից խոշորացվող համայնքների սոցիալտնտեսական ենթակառուցվածքների զարգացման ծրագրերը, նման ծրագրերին մասնակցելով, հույս ունենք, մարզում օտարերկրյա ներդրումների քանակը զգալի ավելացնել: